

տարածմանը դարկ տալու նպատակով թարգմանում է եւ կովկասեան շերամապահական կայարանի օժանդակութեամբ հրատարակում է Եղուարդ Բերտրանի «Մեղուների խնամատարութիւնը» զրուածքը, որ մինչեւ այսօր էլ ծառայում է իբրեւ ձեռնարկ հայ մեղուապահների համար:

Յիշատակենք եւ այն որ Մխիթարեանը եօթ տարի շարունակ (1914-920) վարել է Հայոց Գիւղատնտեսական Բնկերութեան քարտուղարի պաշտօնը: Նոյնպէս թարգմանել եւ հրատարակել է գիւղատնտեսութեան այլ ճիւղերի վերաբերեալ, կաթնատնտեսական, երկրագործական, անասնապահական եւ այլ հանրամատչելի գրքեր եւ այդպի-

սով հարստացրել հայ գիւղատնտեսական զրականութիւնը:

Ահա այն գերը, որ կատարել է Մըլիթարեանը իրրեւ զրականագէտ, մանկավարժ եւ գիւղատնտես: Անկատկած, նա հանդիսացել է իր ժամանակի կուլտուրական դէմքերից մին, բայց իր համեստ բնաւորութեան պատճառով՝ մնացել է յետին պլանի վրայ:

Ժամանակն է, որ նրա աջող երգերը, պատմուածքները եւ ճանապարհորդական էջերը առանձին գրքոյկով հրատարակուին:

Դա էլ կը լինի լուսագոյն արձանը նրա թարմ հողակոյտի վրայ:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ
Թիֆլիս 26 օգոստ. 1931



ԱՐԵՒԻՒ ՀԵՏ

Կ'իյնայ դիւթանին արեւին, կը համբուրէ նակատէս.

Կը բեկրեկի, կը շոյէ, յետոյ մարմնիս կը փարի,

Սիրոյ նրման ջերմագին ու գրթութեան պէս բարի:

Պատուհանէս ներս խոնարի, ծաղիկներու փունջի պէս,

Երջանկացած իր այցէն՝ «արե՛ւ, արե՛ւ» կը մընչեմ,
«Թափէ՛ տարփանիքը թաւիշ, լեցո՛ւր սենեակս հեզասեմ,
Զի ես ծարաւ եմ շողիդ, շառայլներուդ ոսկեղէն,
Ես՝ ցըրտահար ու հիւանդ՝ կեանիքի դաժան քամիէն:

«Մայրամուտը քող, արե՛ւ, ֆիչ մը, ֆիչ մը երկարի,
Ու քող հոսի դեռ այսպէս երջանկութիւնն ըղձալի
Համբոյրներուդ ջերմութեան, մինչեւ սառո՛յցը հալի:

«Արե՛ւ, զիսե՞ս, երբ մեկնիս, պիտի խուցըս խաւարի,
Ու շուրջս ամէն բան մըսի...զի մինակդ ես, ոզի՛, դուն,
Որ սեմէս ներս կը բերես ֆիչ մը լոյս ու ջերմութիւն»:

ՍԱՐԳԻՍ ՄԵՀԵԱՆ

1931 Պրումմանա